## Ժողովածու երկրորդ

*"Ձայնագրված ազգային՝ գյուղական-ժողովրդական*
*երգերի, պարերի հավաքածու"*
*Հավաքեց և ձայնագրեց Սողոմոն Ա[վագ] Սարկ[ավագ] Սողոմոնյան*
*միաբան Ս.Էջմիածնի [18]94, 9 Բ [փետրվար], Ս.Էջմիածին*

### 6(1). ՆՈՐ Ա ԲԱՑՎԵԼ ՍԱՐԻ ԼԱԼԵՆ




Նոր ա բացվել սարի լալեն,
Թող մեռնի սապըպի բալեն.
*Նանի, նանի, նանի, նանի,*
*Նանի,նանի ջան.*
Թող մեռնի սապըպի բալեն:
*Ողբում եմ, լալիս եմ,*
*Չեմ գնա, նանի ջան:*

Եկան գըրին եզն ու գոմեշ,
Ձեռըս քըցի Աստըծու փեշ:

Եկան գըրին մեր ձիանիք,
Մեծից հասավ մեր զիանիք:

Եկան գըրին մեր կովերը,
Հայերին քըցին ծովերը:

Սարուղամիշ, դու ձուն արի,
Ղարիբ աղբեր, դու տուն արի:

Յար, ամպել ա՝ ձուն չի գալիս,
Ղարիբ աղբեր տուն չի գալիս:

Եկա հասա Էջմիածին,
Քեզի մեռնեմ, Աստվածածին:

Երևանա ճամփեն դուզ ա,
Թագավորը սալդաթ կուզա:

Թըղթերն եկան այլուն-փայլուն,
Որն ազապ էր, որ նըշանլուն:

Թագավորի դըռան պուզը,
Սալդաթներին քոմին դուզը:

Արնն առավ Կողբա սարին,
Ե՞րբ կըթըմմի երեք տարին:

Արև դիպավ Կողբա սարին,
Ե՞րբ կհասնեմ ես իմ յարին:

Սալդաթ տանելը մըրմուռ ա,
Տեր իմ Աստված, ազատ արա: